Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Առարկա՝ Դասվար

Թեմա՝ Օժտվածություն ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպումը տարբերակված ուսուցում իրականացնելիս

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Ղազարյան Զարուհի

2022

Բովանդակություն

Ներածություն 3
Օժտված երեխաների առանձնահատկությունները 4
Օժտված երեխաների հոգեբանական օտարացվածության դրսևորումների հետազոտություն . 9
Օժտված երեխաների հետ անհատական աշխատանքի ձևերն ու մեթոդները 15
Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների հետ 17
Եզրակացություն 19
Առաջարկություններ 19
Օգտագործված գրականության ցանկ 21

Ներածություն

Յուրաքանչյուր երեխա յուրահատուկ աշխարհ է: Նրան կարող է ճանաչել այն մեծահասակը ով կարողանում է մանկան հետ կիսել նրա տխրությունը, անհանգստությունը, ապրել նրա ուրախությամբ ու հաջողությամբ: Բոլոր ժամանակների առաջադեմ մանկավարժները մեծ տեղ են հատկացնում երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հիմնահարցին:

Իրենց յուրովի մտածելակերպով, օժտվածությամբ, բարձր ինքնագնահատականով, խելացիությամբ, պատկերավոր մտածողությամբ, արտասովոր ընդունակություններով երեխաները միշտ մեծ հետաքրքրություն են առաջացրել ինձ մոտ և ընտրել եմ այս թեման՝ որպես հետազոտական աշխատանք:

Թեմայի արդիականությունը

Օժտված երեխաների գաղափարը այժմ արդեն խիստ արդիական է, քանի որ օժտված երեխաներն ինչպես ծնողի ու մանկավարժի, այնպես էլ հասարակության, ինչու չէ, նաև պետության աջակցության ու օժանդակության կարիքն ունեն: Օժտված երեխաների պահանջարկը գնալով աճում է. Մերօրյա իրականությունն էապես զգում է խելացի, տաղանդավոր և ինտելեկտուալ երեխաների կարիք:

Հետազոտական աշխատանքի նպատակները

Զարգացնել գիտելիքները բազմազանության, մասնավորապես՝ օժտվածության վերաբերյալ

Կատարելագործել օժտվածության դրսևորման առանձնահատկությունները, պարզել, թե ինչպիսի գործոններ են ազդում օժտվածության երևույթի վրա

Բարձրացնել անհատական աշխատանքի ձևերն ու մեթոդները

Հետազոտական աշխատանքի խնդիրները

- Ճանաչել երեխային, ընդունել նրա անհատականությունը, հայացքները, դիրքորոշումը
- Ընդունել երեխայի անձը, հասկանալ, թափանցել նրա ներաշխարհը

Օժտված երեխաների առանձնահատկությունները

Օժտվածությունը դեռևս չունի որևէ կոնկրետ սահմանում,քանզի այն, ըստ էության, դժվար վերծանելի և բազմաբնույթ երևույթ է: Նախկինում փոքր է եղել այն համարձակների թիվը, որոնք զբաղվել են այս աննախադեպ երևույթի ուսումնասիրությամբ: Այսօր, անկասկած, գնալով աճում է նման հետաքրքրքասեների բանակը: Դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ օժտվածության վերաբերյալ պատկերացումները ոչ միայն սեփական անձի, այլև այլ մարդկանց նկատմամբ կարող են բավականին ինքնատիպ դրսևորումներ ունենալ: Օժտվածությունը համընդհանուր բնույթ չի կրում: Այս երևույթի դրսևորումներն առկա են եղել, և դրա մեկնաբանության առաջին քայլերն արվել են դեռևս անտիկ ժամանակներից:Երբփորձում ենք մանրամասն վերլուծել ու մեկնաբանել այն, ապա անկասկած պետք է պատասխան տանք հետևյալ հարցերին.

- Ինչ կերպ է օժտվածությունն արտահայտվում դեռևս վաղ տարիքում
- Որ նախադրյալներն են ստիպում ծնողին, մանկավարժին, հոգեբանին եզրակացություն կազմել տվյալ երեխայի օժտվածության մասին:

Այս երևույթը լուսաբանող հետազոտության բուն նպատակն է առաջին հերթին օժտվածության բացահայտումը: Դա էլ իր հերթին հնարավորություն է տալիս դիտարկել օժտված երեխայինհատուկ բոլոր առանձնահատկությունները, որոնք իրենց ուրույն դրսևորումներն են գտնում վերջինիս վարքում, մտածելակերպում և անձի ընդհանուր գործունեության մեջ:

Ինչպես գիտության այնպես էլ հասարակության առջև ծառացած այժմէական հիմնախնդիրներից մեկն օժտվածության երևույթն է: Բանն այն է, որ բնական ռեսուրսներով գրեթե աղքատ մեր երկրում դժվար է զարգացման հեռանկարներ կանխատեսել մոտ ապագայում: Ուստի պետք է ոչ միայն հիշել՝ ամենակարևոր հարստության՝ստեղծագործական ներուժի մասին, այլև նպաստել դրա բացահայտմանը, դրսևորմանն ու զարգացմանը:

Չնայած խնդրի արդիականությանը, այն բավարար ճափով ուսումնասիրված չէ ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Օժտվածության հիմնախնդիրն իր հերթին առաջադրում է հարակից և փոխկապակցված խնդիրներ,

որոնք հետազոտման, լուսաբանման կարիք ունեն և կարևոր են ինչպես անձի, այնպես էլ ընդունակությունների զարգացման առումով: Առ այսօր չկա որևէ <<ճիշտ>> սահմանում, որը կբնորոշի օժտված երեխային, ուսումնասիրված չէ թե ինչպիսի դժվարություններ է հաղթահարում օժտված երեխան շրջապատում, հասակակիցների հետ շփվելիս, ինչ մեխանիզմներով է տեղի ունենում նրա հարմարումը և որ պատճառներն են հանգեցնում անհարմարվողականության: Հետևաբար, մշակված չեն նաև այն հոգեկարգավորիչ միջոցառումները, որոնք օժտվածության, ինչպես նաև տարիքային առանձնահատկությունների հաշվառումով կիրառելի կլինեն օժտված և հատկապես չհարմարված երեխաների համար:

Օժտվածությունը հաճախ ուղեկցվում է անհարմարվողականությամբ և հոգեբանական օտարացմամբ, վկայում են ինչպես դիտումները և հետազոտության արդյունքները , այնպես էլ հայտնի, օժտված մարդկանց կյանքի ուսումնասիրությունները: Ի դեպ որոշ հեղինակների մոտ անհարմարվողականություն և օտարացվածություն հասկացությունները փոխկապակցված են և անհարմարվողականության պատճառներից մեկը կարող է հոգեբանական օտարացվածությունը լինել: Իմ կարծիքով ևս ընդունակություններով հանդերձ դրանք նույնական չեն նև բնութագրվում են , որոշ տարբերակիչ առանձնահատկություններով: Հետազոտության շրջանակներում փորձ է արվել փաստել, որ օժտվածությունը հաճախ զուգակցվում է հոգեբանական օտարացվածության հետ, որն էլ իր հերթին կարող է օժտվածների դեզադապտացիայի ապահարմարման պատճառ դառնալ:

Օժտվածների առավել հստակ դրսևորվող առանձնահատկություններից է խոսքի վաղ զարգացումը, որն անմիջականորեն ուղեկցվում է հարուստ բառապաշարի ձևավորմամբ: Յուրահատկությունն է նաև նրանց կողմից ցուցաբերվող ծայրահեղ, երբեմն նույնիսկ զարմանք հարուցող ուշադրությունը գրեթե ամեն ինչի նկատմամբ: Սա վկայում է այն մասին, որ օժտվածը ծայրաստիճան հետաքրքրասեր ու նրբանկատ է: Չմոռանանք նշել մի կարևոր հանգամանք ևս. օժտված երեխան աչքի է ընկնում հիշողության մեծ ծավալով. Շատ դժվար է շփոթեցնել կամ փորձել ապակողմնորոշել նրան:

Վերը նշված յուրահատկություններն ընդհանրացնելով, ինչպես նաև խմբավորելով մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները՝ փորձենք առանձնացնել օժտված երեխաներին հատուկ մի քանի առանձնահատկություն ևս:

Ինչպես արդեն նշել եմ, չկան հատուկ մշակված չափանիշներ, օժտվածությունը սահմանելու համար: Ուստի օժտված երեխաներին բնորոշելիս ու վերջիններիս առանձնահատկությունները նշելիս իմ հետազոտության ընթացքում հիմնվել եմ ծնողի, մանկավարժի ու հոգեբանի կողմից արված նկարագրերին :

Օժտված երեխաների առանձնահատկություններից մեկն էլ նրանց գերզգայունությունն է: Իմ հետազոտության ընթացքում բազմիցս առիթ եմ ունեցել հետևելու օժտվածի վարքին թե դասերի ընթացքում և թե դասերից դուրս: Բանն այն է, որ օժտված երեխան չափազանց լավ է զգում իրեն շրջապատող ամեն ինչ: Դրա պատճառներից մեկն այն է, որ վերջինս խիստ ուշադիր է ամեն ինչի նկատմամբ: Երբեմն օժտվածն ի զորու է նկատել և ընկալել այնպիսի չնչին , աննկատ թվացող երևույթներ, որոնց մասին սովորական երեխան նունիսկ չի էլ մտածում:

Օժտվածների այդպիսի զգայությունն առաջին հերթին պայմանավորված է վերջիններիս չափից ավելի տպավորվող և ընկալունակ լինելու հատկությամբ:

Լավ արտահայտված ազնիվ ու արդար լինելու զգացումների հետևանքով նրանք երբեմն բավականին դժվարությամբ են հարմարվում թե շրջապատող միջավայրին, թե մարդկանց: Սա հաճախ կարող է օժտվածին հանգեցնել հոգեբանական օտարացման: Այդ պատճառով նրան սկսում են տանջել մեկուսացվածության զգացումը և այն մտավախությունը, որ ոչ ոք իրեն չի հասկանում:

Այսպիսով՝ զարմանալի չէ, որ հաճախ օժտվածի վարքում մերժվածության զգացողության հետևանքով գերակշռող են դառնում այնպիսի տհաճ հույզեր ու ապրումներ, որոնք անպայմանորեն ուղեկցվում են հոգեկան անբավարարվածությամբ, զանազան հիասթափություններով ու ճնշվածությամբ:

Օժտված երեխաների հոգեբանական առանձնահատկություններից թերևս ամենաընդգծվածը, նրանց վառու պատկերավոր երևակայությունն է: Դրա շնորհիվ օժտված երեխան իր հասակակիցներից տարբերվում է ստեղծագործելու, բազում հետաքրքիր ու յուրօրինակ պատմություններհորինելու, ամենատարբեր իրավիճակներում առանձնահատուկ ու ինքնատիպ լուծումներ գտնելու հիանալի

տաղանդով: Չմոռանամ նշել նաև, այն կարևոր հանգամանքը, որ այս ամենն արվում է օժտվածին հատուկ հնարամտությամբ ու սուր արտահայտված հումորով:

Իմ հետազոտության ընթացում առիթ եմ ունեցել շփվելու այնպիսի օժտվածների հետ, որոնք զարմացրել են՝ իրար հետ երբեմն ընդհանրապես կապ չունեցող երևույթների ու առարկաների միջև տրամաբանական աննախադեպ հանգույցներ ու զուգորդություններ ստեղծելու կարողությամբ:

Այսպես, երբ 8-ամյա տղային հանձնարարվեց տարբեր տրամագծերի չորս օղակներից ստանալ մեկ պատկեր. Նա նկարեց լուսամփոփ: Մինչդեռ իր հասակակից մյուս աշակերտները նկարեցին կամ ծաղիկ, կամ արեգակ: Իսկ երբ հետազոտվող մեկ այլ օժտվածի հանձնարարվեցգրատախտակի վրա համառոտագրել մաթեմատիկական ամենասովորական խնդիրը, վերջինս դա կատարեց ամենաանկանխատեսելի ձևով. Նկարեց խնդիրը, ընդ որում՝ ամենայն մանրամասներով (խնդրումակաերկումարդկան, սեղանըևդրավրադրվածիրերրևայլն):

Սա, թերևս, վկայում է այն մասին, որ օժտված երեխան ունի պատկերավոր մտածողություն: Դա անմիջականորեն արտահայտվում է նրա խոսքում և գործողություններում :

Օժտվածների մյուս առանձնահատկությունը առընչվում է նրանց խելացիությանը և մտքի ճկունությանը: Բաննայնէ, որ օժտված երեխան ձգտում է ընդգծել իր ունակություններն ու արտասովոր հնարավորությունները և մշտապես մրցակցում իր հասակակիցների հետ՝ ջանալով ամեն ինչում լինել առաջինը:Այդ է պատճառը, որ օժտված երեխաների մեծամասնությունը գրեթե միշտ ու ամենուրեք հանդես է գալիս առաջնորդի դերում:

Օժտված երեխան սովորաբար հակված չէ պարտության կամ ձախողումների: Եթե նա,այնուամենայնիվ ինչ-որ տեղ զիջում է դիրքերը, ապա դա ուղեկցվում է վերջինիս հոգեկան ճնշվածությամբ:

Օժտվածների հակվածությունը լիդերության, անկասկած, պայմանավորված է վերջիններիս բարձր ինքնագնահատականով: Դա, անշուշտ, կարող է հանգեցնել և դրական, և բացասական հետևանքների: Ամեն ինչում առաջինը լինելու հակումն օժտվածին դրդում է, ցանկացած խոչընդոտ հաղթահարելով, հասնել իր նպատակին:

Նման նպատակասլացությունը, ինչ խոսք, խրախուսելի է: Սակայն այստեղ առկա է նաև պարտվելու հավանականությունը: Երբեմն նույնիսկ օժտվածի համար հնարավոր չի լինում ամեն ինչ ըստ ամենայնի պլանավորել և կանխորոշել: Դա էլ, թերևս պատճառ է դառնում զանազան տհաճ ապրումների՝ ընդհուպ մինչև սեփական անձի հետ հակասական իրավիճակների ստեղծման:

Իմ կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև այն փաստը, որ շատ ծնողներ, բացահայտելով իրենց երեխայի օժտվածությունը, փորձում են հնարավորինս ընդգծել և, ինչու չէ նաև հասարակությանն ի ցույց դնել երեխայի տաղանդը: Սակայն այդ ամենը պետք է անել այնպես, որ օժտվածը քաջադեղյակ լինելով սեփական հնարավորություններին ու տաղանդին, զարգանա իր հասակակիցներին համապատասխան՝ չխախտելով իր զգացմունքային , արժեքային և իմացական համակարգի բաղադրիչների միջև եղած օրինաչափ կապը: Դա անդրադառնում է երեխայի հոգեկանի զարգացման, աշխարհընկալման ու աշխարհայացքի ձևավորման ինքնագնահատականի վրա: Այս առանձնահատկությունը ստիպում է նրանց սեփական անձի նկատմամբ լինել գերպահանջկոտ, լուծումներ որոնել անլուծելի թվացող խնդիրների համար, իսկ ձախողելու դեպքում դատապարտել սեփական անձը: Ամենայն հավանականությամբ՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ օժտվածը, պարտաճանաչ լինելով ամեն ինչ անում է, որպեսզի արդարացնի իր հետ կապված բոլոր սպասումները, չհիասթափեցնի ինքն իրեն և շրջապատին: Օժտվածները, զգայունակությամբ և ընկալունակությամբ պայմանավորված, մեծ մասամբ ունենում են սոցիալական շփման դժվարություններ: Այդ առումով նպատակահարմար է վաղ տարիքից խաղերի ու մարզումների միջոցով երեխաների մեջ մշակել սոցիալական հմտություններ, հետևել, որ վերոհիշյալ առանձնահատկություններն ուղղորդվեն դեպի կառուցողական վարքը: Անհրաժեշտ է հատկապես զգույշ լինել օժտվածի անձին և ընդունակություններին տրված գնահատականի հարցում : Չէ որ ավելորդ խրախուսանքներն ու գովեստները, զանազան պիտակները չեն նպաստում համարժեք ինքնագնահատականի ձևավորմանը:

Օժտված երեխայի հետ գործ ունեցող մանկավարժի և ծնողի վրա մեծ պատասխանատվություն է ընկնում ինչպես ընդունակությունների զարգացման,

այնպես էլ անձի ձևավորման առումով: Առաջին հերթին նրանցից պահանջվում է չճնշել օժտվածի հարցասիրությունը, չզլանալ՝ նրանց հարցերին խոր ու սպառիչ պատասխաններոր տալուց և ցուցաբերել համբերություն: Հաճախ կարելի է նաև հարցասիրության խրախուսման նպատակով դասարանում մրցակիցներ շնորհել ամենահետաքրքիր ու ինքնատիպ հարցերի համար:

Օժտվածները պետք է հաճախեն բազմաբնույթ ուսումնական խմբակներ, որոնք կխթանեն ստեղծագործական պոռթկումները: Նրանք հակված են ստեղծագործական աշխատանքի, և սխալ կլիներ իմացական ծանրաբեռնվածությունը սահմանափակել միայն ուսումնական նյութերով: Իմ դիտարկումները վկայում են, որ մանկավարժները միշտ չէ որ ճիշտ են իմաստավորում օժտվածության երևույթը: Երբեմն առանձին երեխաներ տալիս են ոչ ստանդարտ, նույնիսկ ոչ տրամաբանական, բայց ինքնատիպ պատասխաններ: Պետք չէ շտապել և այդ պարագայում պատասխանը սխալ որակել: Հարկավոր է խրախուսել՝ յուրօրինակ, ստեղծագործական մոտեցման առկայությամբ պատասխանները: Չի կարելի հավասարեցնել բոլոր երեխաներին արհեստականորեն: Արհեստավարժ մանկավարժն անպայմանորեն օժտվածի մեջ կնկատի լիդերին: Օժտվածների միջև մրցակցությունը պետք է ծառայեցնել բարձր չափանիշների մշակմանը: Մանկավարժն ու ծնողը պետք է նրբանկատություն դրսևորեն և չճնշեն լիդերության ձգտումներն ու հակումները օժտված երեխայի մեջ: Հակառակ դեպքում նրան սպառնում է նյարդային հիվանդագին վարքագիծը: Օժտվածների միջև մրցակցությունը պետք է ծառայեցնել բարձր չափանիշների մշակմանը:

Բազմաթիվ ու բազմազան են օժտված երեխաների առանձնահատկությունները: Ուստի սահմանափակվեցի օժտվածների վարքի մեջ վառ արտահայտված այն առանձնահատկություններ թվարկմամբ, որոնք դրսևորվել են հետազոտությունների ընթացքում:

Օժտված երեխաների հոգեբանական օտարացվածության դրսևորումների հետազոտություն

Օժտվածությունը հաճախ ուղեկցվում է հոգեբանական օտարացմամբ, որն էլ իր հերթին կարող է օժտվածների դեզադապտացիայի (ապահարմարման) պատճառ դառնալ:

Անդրադառնամ որոշ հարցերի, որոնք կարող են հոգեբանական օտարացվածության հիմք լինել:

Պատճառները կարող են բազմաբնույթ լինել: Շատ հաճախ հասարակության կողմից կարող են ոչ միշտ ճիշտ գնահատվել և հասկացվել ինչպես հարկն է: Երեխաները հանդիպում են լուրջ դժվարությունների նաև հուզական, իմացական և սոցիալական զարգացումների անհամապատասխանության պատճառով, երբ անձի մի ոլորտն ավելի է զարգանում, թե մյուսը: Նշված երևույթը կարող է ունենալ անցանկալի հետևանքներ ինչպես ընդունակությունների, այնպես էլ անձի զարգացման առումով: Այստեղ շատ անելիք ունեն թե ծնողները, թե՝ մանկավարժները: Հակառակ դեպքում երեխայի հուզական ոլորտը թերի կմնա, և նա ոչ միայն չի ինտեգրվի հասարակությանը ու շփման հմտություններ չեն ձևավորվի, այլև ունենալով մտավոր բարձր ունակություններ՝ օժտվածը հոգեպես տհաս կմնա և այս պարագայում է, որ ծնվում են օժտվածների օտարացված, հիվանդագին և հոգեպես <<տհաս>> կերպարներ՝զուրկ հոգեբանական հասունությունից և <<հուզական ինտելեկտից>>: Ցավոք այս երևույթը հաճախ է հանդիպում օժտված երեխայի մոտ: Դա հանգեցնում է այն բանին, որ երեխան չի բավարարում իր առաջնահերթ պահանջմունքքները՝ շփման, իր հնարավորությունները ցուցադրելու միջոցով ինքնագնահատման, ինքնահիրացման և այլն, որի հետևանքով նրա մոտ արգելակվում են ընդունակությունների զարգացումը, ստեղծագործական կարողությունների դրսևորումը: Բացի այդ, շփման անբավարարվածությունն ու կարևոր պահանջմունքների երկարատև ճնշումը հանգեցնում են նրան, որ երեխան հոգեբանորեն օտարանում է հասարակությունից և դառնում ինքնամփոփ, լռակյաց, անտարբեր, մտածկոտ կամ դրսևորում է ակտիվություն, բացահայտ թշնամանք, դեզադապտիվ վարք:

Կարևորելով այս հանգամանքները ուսումնասիրել եմ և ցույց տամ այն փաստը,որ օտարացվածությունը հաճախ զուգակցվում է հոգեբանական օտարացվածությամբ:

Կիրառել եմ ոչ միայն ավանդական մեթոդներ՝դիտումը, հոգեբանական զրույցը, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդը, պրոյեկտիվ մեթոդները՝<< Իմ ընտանիքը>>, <<Ինքնանկար>>, Ռ. Ժիլի <<Միջանձնային հարաբերությունների

ախտորոշման մեթոդիկան>> , այլև <<Հոգեբանական օտարացվածության մակարդակն ախտորոշող>> թեստ-հարցարանը:

<<Հոգեբանական օտարացվածության մակարդակն ախտորոշող >> թեստ-հարցարանում ընդգրկել էի 10 հարց, որոնք վերաբերում էին երեխայի կյանքի տարբեր կողմերին և այլ մարդկանց հետ շփմանը: Հետազոտվողին խնդրվում էր ուշադիր լսել հարցերը՝յուրաքանչյուրին պատասխանելով <<այո>> կամ <<ոչ>>: Ախտորոշվում էր ինչպես երեխայի օտարացվածության մակարդակը, այնպես էլ անձի օտարացվածությունը ընտանիքից, հասակակիցներից, մանկավարժներից, <<Ես>>- ից: Արդյունքների մշակումը կատարվում է նշված յուրաքանչյուր սանդղակի համար առանձին համընկնումների քանակի հաշվման (բանալիների) միջոցով: Յուրաքանչյուր համընկնում հավասար է մեկ միավորի: Այնուհետև յուրաքանչյուր սանդղակից ստացված միավորների գումարով որոշվում է անձի ընդհանուր օտարացվածության մակարդակը:

Ստացված արդյունքների բացահայտված օժտվածներից՝ 2 տղա, 5 աղջիկ, 7-ի մոտ նկատվել է տարբեր աստիճանի հոգեբանական օտարացվածություն: Նրանցից 3-ը՝ Տաթևիկը, Լիանան, Անուշը ունեն օտարացվածության շատ բարձր մակարդակ, Էլենը՝ բարձր մակարդակ, Զարուհին, Արտակը և Սուրենը՝ միջին մակարդակ: Արդյունքների հավաստիության մասին են վկայում նաև մյուս մեթոդներով ստացված արդյունքները:

<<Իմ ընտանիքը>>մեթոդիկայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտացոլում է երեխայի ենթագիտակցական վերաբերմունքն ընտանիքի և նրա անդամների նկատմամբ: Դա նշանակում է, որ եթե երեխան իսկապես օտարացած է ընտանիքից, ապա այդ հանգամանքը անպայման արտացոլվել է երեխայի նկարում: Այն երեխաները, որոնց մոտ բարձր են օտարացվածության մակարդակն ախտորոշող թեստ հարցարանի <<Օտարացվածություն ընտանիքից>> սանդղակի արդյունքները՝ նրանց <<Իմ ընտանիքը>> թեմայով նկարները նույնպես առանձնանում էին օտարացվածության ակնառու դրսևորումներով: Որոշ երեխաների մոտ դա արտահայտվում էր ծնողներին չընդգրկելով, մի մասը ծնողներին դեմք չէր նկարել, որոշները կամ իրենցից շատ հեռու էին նկարել, կամ շրջված:

«Իմ ընտանիքը»

«Իմ ընտանիքը»

«Իմ ընտանիքը»

<<Ինքնանկար>>մեթոդիկան նույնպես կիրառական նշանակությամբ շատ նման է <<Իմ ընտանիքը>> մեթոդիկային: Այս մեթոդով հաստատվեցին իմ որոշ դիտումները: Այստեղ նույնպես շատերի մոտ համընկան <<Ինքնանկար>> մեթոդիկայի արդյունքների հետ: Դրանք նույնպես հետաքրքրական են և բավական ակնառու ցույց են տալիս սեփական <<Ես>>- ից հոգեբանական օտարացման դրսևորումները: Մի դեպքում դա արտահայտվում է դեմքի, սեփական մարմնի, կամ դրա որևէ հատվածի բացակայությամբ, իսկ մյուս դեպքում իր փոխարեն ուրիշին կամ իրեն շրջված նկարելով:

Ռ.Ժիլի <<Միջանձնային հարաբերությունների ախտորոշման>>մեթոդիկան լայն հնարավորություններ տվեց հոգեբանական օտարացվածության առկայությունը փաստելու համար, քանի որ երեխայի համապատասխան ընտրությունից երևում է թե ինչ վերաբերմունք ունի նա շրջապատի նկատմամբ, ում է ընդունում կամ մերժում: Մեթոդիկան բնութագրում է երեխայի միջանձնային հարաբերությունների համակարգը՝ հարաբերությունը մոր , հոր հետ, հարաբերությունը մոր և հոր հետ որպես ընտանեկան զույգի, եղբայրների ու քույրերի հետ, տատիկի և պապիկի հետ, ընկերների հետ, ուսուցչի հետ ինչպես նաև ունի շփվողականությունը, ներամփոփվածությունը, հոգեբանական օտարացվածությունը և մեկուսացվածությունը ախտորոշող սանդղակներ: Կոնկրետ անձի նկատմամբ վերաբերմունքը որոշել ենք երեխայի կողմից այդ անձի քանակական ընտրությամբ:

Դիտումները և հետազոտությունների տվյալների վերլուծությունը ցույց են տալիս, որ օժտված երեխաների մեծ մասի մոտ իսկապես առկա է այս կամ այն աստիճանի հոգեբանական օտարացվածություն, ինչը ոչ միայն խանգարում է ընդունակությունների, այլև անձի ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը: Բերեմ ևս որոշ օրինակներ իմ հետազոտությունից:

Տաթևիկ, 8 տարեկան: Շատ տաղանդավոր երեխա է, շատ յուրօրինակ և գեղեցիկ նկարներ է նկարում , հեքիաթներ ու բանաստեղծություններ հորինում, օտարացված է, մեկուսացված է իր հասակակիցներից, չի շփվում նրանց հետ, չի խաղում , սիրում է միայնակ խաղալ, կամ նայել պատուհանից դուրս: Չի մասնակցում ոչ մի պարապունքին, չի պատասղանում իրեն տրված հարցերին, թողնելով չիմացողի տպավորություն: Նրա տաղանդն արտաքուստ չէր երևում, բայց երբ ուսումնասիրում է ստեղծագործական ընդունակությունները հասկացա, որ այդ երեխան իսկապես տաղանդավոր է: Ապրում ու մեծանում է անբարենպաստ ընտանեկան պայմաններում: Ծնողները ապրում են առանձին , հայրը գտնվում է արտերկրում: Մայրը աշխատում է երեխաներից հեռու, երեխաներին այցելում է ժամանակ առ ժամանակ: Ընտանիքի հոգսը հոգում են տատիկները: Աշխատելու պատճառով երեխաները հիմնականում մենակ են անցկացնում օրը: Տաթևիկը ինքնամփոփ է , հոգեբանական օտարացվածությունը դրսևորում է ինքն իր մեջ պարփակվելով: Իմ որոշ հոգեշտկիչ աշխատանքների արդյունքում պատկերը փոխվեց, նա բավականին

ակտիվացավ, արտահայտում է իր կարծիքը, մասնակցում է հեքիաթների քննարկմանը, խաղերին:

Լիանա, 8 տարեկան: Այս երեխան նույնպես բացառիկ ընդունակություններ ունի: Նրա մոտ ինտելեկտի գործակիցը ավելի բարձր է: Պատմում է իր հորինած հեքիաթները, վերլուծում, մեկնաբանում, տրամաբանական պատասխաններ տալիս, եթե նույնիսկ չգիտեր պատասխանը: Չնայած իր ակտիվությանը՝ Լիանան նույնպես օտարացված է իր հասակակիցներից: Նա ավելի հաճույքով շփվում է մանկավարժների հետ, հաճախ մոտենում է ինձ՝ խնդրելով իր հետ խաղալ, իրեն հարցեր տալ:Նրան շատ են հետաքրքրում ինտելեկտուալ խաղերը, շատ հարցեր է տալիս տարբեր թեմաների շուրջ: Տաղանդավոր լինելու համար ուսուցչի սիրելին է, մյուս երեխաները նախանձում են նրան, նույնիսկ ագրեսիվ են նրա նկատմամբ, այստեղից էլ առաջանում է օտարացվածությունը: Ես աշխատում եմ այդ ամենի շտկման համար, բայց դա երկարատև աշխատանք է պահանջելու, որոշ հոգեշտկիչ աշխատանքներ:

Համեմատելով վերոհիշյալ 2 օրինակները, ապա կերևան ընդհանրություններն ու ստեղծագործական մեծ հնարավորություններ, երկուսն էլ հոգեբանորեն օտարացված են, ունեն շփման դժվարություններ: Հոգեբանական օտարացվածության առաջացումը մի դեպքում պայմանավորված է անբարենպաստ ընտանեկան մթնոլորտով, մյուս դեպքում՝ օտարացվածությանը բնորոշ որոշ առանձնահատկություններով:

Օժտված երեխաների հետ անհատական աշխատանքի ձևերն ու մեթոդները

Խորհմաստ է բժիշկ և գրող Յանուշ Կորչակի հետևյալ միտքը .<<Պետք չէ իջնել երեխայի մակարդակին , այլ հարկավոր է հասնել նրան հասկանալու աստիճանին: Երեխան միշտ պետք է զգա ուժեղ ձեռքերի ամրությունը, լսի իր մտերիմի սրտի բաբախյունը, որը միշտ կլինի իր կողքին, կօգնի, կբացատրի և կհասկանա իրեն>>:

Բոլոր երեխաների նկատմամբ չի կարելի կիրառել միանման մեթոդներ: Հարկավոր է հաշվի առնել ուսուցման և դաստիարակության գործում յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները, որի միջոցով ճիշտ կկազմակերպվի նրանց ուսումնադաստիարակչական գործընթացը:

Անհատական գործընթացը ենթադրում է.

- Ճանաչել երեխային, նրա անհատականությունը, հայացքները, դիրքորոշումները, նույնիսկ՝ սխալները
- Հասկանալ նրա ներաշխարհը, ընձեռնել ներդաշնակ զարգացման հնարավորություն, երկու հիմնական հատկություն

  ա. Ապրումակցելու կարողություն

  բ.անկեղծություն հարաբերությունների մեջ

- Ընդունել երեխայի անձը՝ առանց որևէ նախապայմանի

Գիտության և հասարակության առջև ծառացած արդիական հիմնախնդիրներից մեկը օժտվածության երևույթն է:

Օժտվածությունը առանձնահատկությունների զարգացման բարձր մակարդակն է: Առանձնանում են երեխաների օժտվածության հետևյալ տեսակները՝ակադեմիական, գեղարվեստական, հոգեշարժողական, լիդերային, իմացական:

Հարկավոր է ժամանակին նկատել ու բացահայտել նման երեխաներին, ճիշտ ուղղորդել նրանց զարգացումը: Այդպիսի երեխաները խելացի են, կողմնորոշվող և տրամաբանող: Դեռևս 20-րդ դարի առաջին տասնամյակից շեշտը դրվել է հենց մտավոր ունակությունների և դրանց առանձնահատկությունների բնութագրման վրա: Այդ ժամանակների ուսումնասիրությունները հիմնականում ողղված էին օժտվածության վրա ազդող գործողությունների ուսումնասիրությանը: Այն ինչ այդ երևույթը կարևորագույն ու մանրազննին ուսումնասիրության կարիք ուներ:

Օժտված երեխաների գաղափարը արդեն խիստ արդիական է, քանի որ այդպիսի երեխաները ունեն ծնողի,մանկավարժի, պետության աջակցության ու օժանդակության կարիք: Մերօրյա իրականությունը շատ է զգում այդպիսի երեխաների՝ խելացի, տաղանդավոր, ինտելեկտուալ երեխաների կարիք:

Օժտվածությունը անհատի այնպիսի որակներ է դրսևորում, որոնց կենտրոնում ինտելեկտն է, ինչն ավելի բարձր ու զարգացած է քան տարեկիցների մոտ: Մյուս խնդիրը կապված է օժտված երեխաների նախասիրությունների ուսումնասիրության հետ: Գիտական պահանջարկ է ձևավորվել բացահայտելու նրանց ուժեղ և թույլ կողմերը, հետաքրքրություններն ու նախասիրությունները, ինչպես նաև ճշգրիտ ուղիներ որոնելը, նրանց պատշաճ ուսուցման և դաստիարակման համար: Հարկավոր է աջակցել նման երեխաներին, այնպես անել , որ վերջիններս դառնան

հասարակության լիիրավ ու լիարժեք անդամներ, նպաստել նրանց տաղանդի դրսևորմանը: Հայաստանում օժտվածության երևույթը, բարեբախտաբար, առկա է:

Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների հետ

Փաստ է, որ ամեն դասարանում կա գոնե մեկ աշակերտ, որն առանձնանում է անսովոր մտածողությամբ, խնդրի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությամբ, որին օժտված ենք համարում: Օժտված երեխաների հետ անհամապատասխան պատրաստվածությամբ ուսուցիչները չեն կարողանում բացահայտել տաղանդավոր երեխաներին, որովհետևչեն պատկերացնում նրանց առանձնահատկությունները: Անտարբեր են նրանց հիմնախնդիրների հանդեպ, կամ պարզապես չեն կարողանում նրանց հասկանալ: Երբեմն թշնամաբար են տրամադրվում աչքի ընկնող երեխաների նկատմամբ (չէ որ նրանք վտանգ են ներկայացնում ուսուցչի հեղինակությանը): Օգտագործում են հետևյալ տակտիկան՝ ավելացնել առաջադրանքների քանակը, բայց ոչ թե փոխել դրանց որակը:

Ուսուցման գործընթացում կարևոր գործոն է ուսուցչի անձը, այդ առումով բացառություն չէ նաև տաղանդավոր երեխաների հետ աշխատող ուսուցիչը:

Ուսուցիչների մի մեծ խումբ ուղղորդում է երեխային դեպի ուսուցանվող առարկայի բնագավառ, այնպիսի մթնոլորտ է ստեղծում, որն առաջացնում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ:

Ուսուցիչների 2-րդ խումբը աշխատում է երեխայի հետ ինչպես կատարողական տեխնիկայի վրա, դնում է վարպետության հիմքը:

Ուսուցիչների 3-րդ խումբը երեխային տանում է դեպի բարձր մասնագիտական մակարդակ:

Այս երեք խմբերը ապահովում են տաղանդավոր երեխայի ճիշտ զարգացումը: Մեծ նշանակություն ունեն հայացքների ու համոզմունքների համակարգի առկայությունը, նպատակների ու խնդիրների վերաբերյալ պատկերացումները և հաղորդակցման աճը: Ուսուցիչը պետք է ձգտի նոր գիտելիքների ձեռքբերման և անցած լինի հատուկ վերապատրաստում: Պետք է լինի բարիացակամ ու կարեկից, հասկանա երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, պահանջներն ու հետաքրքրությունները, լինի ինտելեկտուալ բարձր զարգացած: Հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցիչների մասնագիտական որակներին : Նա պետք է ունենա դրական ես

կոնցեպցիա, նպատակասլացություն, հաստատակամություն, հուզական կայունություն, ուսուցման անհատականացման կարողություն:

Մեր հասարակության անբաժան ու անփոխարինելի անդամներն են օժտված երեխաները: Նրանց ճիշտ դաստիարակությունն անխուսափելիորեն հետագայում կտա իր դրական արդյունքները: Հարկավոր է նրանց խառնվածքի և ընդունակությունների առանձնահատկությունները հաշվի առնել, այլ ոչ թե ձգտել փոխել կամ ինչ–որ կերպ ազդել դրանց վրա: Նրանք զգում են ջերմության և հոգատարության, աջակցության կարիք, ունեն փոխըմբռնման ու ինքնահաստատման պահանջ և հասարակությունը պետք է հարգանքով վերաբերվի օժտված երեխաներին: Չմոռանանք, որ այս երեխաներն իրական պարգև են հասարակությանը, քանզի տաղանդն ու շնորհաշատությունն ի վերուստ են տրված, և ցանկացած ժողովրդի բարգավաճումը պայմանավորված է հենց այդպիսի մարդկանցով

Եզրակացություն

Ժամանակի հրամայականներից է օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը, քանի որ քաղաքակիրթ միտքը ուղղորդում են հենց տաղանդավոր մարդիկ և ցանկացած անփութություն անթույլատրելի է մտավոր ներուժի հանդեպ: Երեխաների բացառիկ ընդունակություններով օժտված լինելու փաստը դեռևս չի նշանակում միայն դրական երևույթների առկայություն. այն ներառում է նաև տարաբնույթ մանկավարժական ու հոգեբանական հիմնահարցեր, որոնց անտեսման պայմաններում կարող են առաջանալ բացասական դրսևորումներ:

Իրենց տարաբնույթ ընդունակություններով և հոգեբանական առանձնահատկություններով առանձնանալով,օժտված երեխաները զգում են ընտանիք, դպրոցի աջակցության կարիքը ինչը հատկապես անտեսված է մեր հասարակության կողմից: Ինչպես չառաջադիմող, այնպես էլ արտակարգ ընդունակություններով օժտված երեխաները, հավասարապես զգում են մանկավարժական միջամտության և նպատակաուղղված գործունեության կարիք:

Օժտված երեխաների կրթության և դաստիարակության հարցը մանկավարժության և հոգեբանության արդիական, վիճահարույց հիմնահարցերից է, ինչը լուրջ հետազոտության և մեկնաբանման կարիք ունի: օժտված երեխաները իրենք գործունեության ընթացքում ունենում են սոցիալական հարմարման և միջանձնային շփման խնդիրներ: Օժտված երեխաների հուզական ոլորտի զարգացումն իր տեմպերով զիջում է մտավոր զարգացմանը, ինչը հանգեցնում է անհամամասնությունների և բախումների:

Առաջարկություններ

Օժտվածների համար պետք է ստեղծել առանձին դասարաններ (թեկուզ բազմակազմ) և մշակել ուսումնական ծրագրեր: Օժտված երեխաների ուսման ու դաստիարակության հարցերը ճիշտ կազմակերպելու խնդիրներն առանձին և երկարատև ուսումնասիրության առարկա են, առավել մանրամասն հետազոտություններ են պահանջում:Ես ուրախ եմ, որ մեր երկրում մեծ հոգատարությամբ են լցված ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ, կցանկանայի ամենամեծ հոգածությամբ շրջապատված լինեն օժտվածություն ունեցող երեխաները,

լինեն պետության հոգատարության և հսկողության տակ, որովհետև նրանք են մեր թռիչքի թևերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Одаренные дети: Пер. с англ. /Обш. ред. Г.В. Бурменской и В. М. Слуцкого; Предисл. В. М. Слуцкого.- М.: Прогресс, 1991.- 376 с.
2. Психология одаренности детей и подросткой: Под ред. Н. С. Лейтеса.- М.: Издателский центр, Академия, 1996.-416 с.
3. ՆելլիԲրուտյան , <<Օժտվածություններևույթիփորձարարականհետազոտություն>>
4. <<Նախաշավիղ>>գիտամեթոդականհանդես, Երևան , 2010 թ.,7. 2012 թ.: